ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/260

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Բիդեք» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 18.12.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18727-2020 գրությամբ «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չուեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.12.2020թ. թիվ 02/16.4/9185-2020 գրության հիման վրա 15.12.2020թ. թիվ 26/26-1/18727-2020 գրությամբ նախաձեռնել է «Բիդեք» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Բիդեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Բիդեք» ՍՊԸ-ն 24.12.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալ.

««Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ՆԳ-2020/260 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

- *Գործի նախապատմությունը և փաստերը.*

«Բիդեք» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 04.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության 1 կետով՝ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ում արձանագրվել է անհամապատասխանություններ /կցվում է/:

Եվ նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «Բիդեք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից էլ. եղանակի միջոցով 04.12.2020թ. ստացվել է 04.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-2 արձանագրության պատճենը, որը գնահատող հանձնաժողովի կողմից դիտարկվել է որպես շտկման ծանուցում:

Ծանուցումը ստանալուց հետո, հաջորդող օրը /05.12.2020/, այսինքն սահմանված ժամկետում, «Բիդեք» ՍՊԸ-ն իր էլ. փոստի հասցեից ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնումների համակարգողի՝ tender4@minurban.am էլ.փոստին հասցեին է ներկայացվել շտկված փաստաթուղթը, այն է՝ Հավելված 1.1-ը:

Սակայն գնահատող հանձնաժողովի 08.12.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն՝ «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որևէ փաստաթուղթ չի ներկայացվել և

գնահատող հանձնաժողովը որոշել է «Բիդեք» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

- Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի.

41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցումը՝ էլ. եղանակի միջոցով ստացվել է 04.12.2020թ., որով մասնավորապես ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնահատող հանձնաժողովը հայտերի ուսումնասիրության արդյունքում «Բիդեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես Հավելված 1.1-ը և առաջարկել սույն ծանուցումը ստանալուց՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը և վերընշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ.փոստին՝ tender4@minurban.am հասցեով:

«Բիդեք» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալու հաջորդ օրը՝ 05.12.2020թ.՝ իր էլ. փոստի հասցեից՝ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնումների համակարգողի՝ tender4@minurban.am էլ. փոստին հասցեին է ներկայացրել շտկված փաստաթուղթը /Հավելված-1.1-ը/:

Սակայն անհասկանալի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2020թ. տեղի ունեցած նիստի համաձայն արձանագրվել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ոչ մի փաստաթուղթ չի ներկայացրել և մերժել ՍՊԸ-ի հայտը:

Մինչդեռ՝ «Բիդեք» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը և շտկման ծանուցումը ստանալուն պես՝ սահմանված ժամկետում ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգի համակարգողի՝ tender4@minurban.am էլ.փոստին հասցեին է ներկայացրել շտկված փաստաթղթերը՝ Հավելված 1.1/կցվում է/:

Գտնում ենք, որ «Բիդեք» ՍՊԸ-ն շտկումը կատարելու և սահմանված ժամկետում պահանջված փաստաթղթերը ուղարկելու պայմաններում թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք «Բիդեք» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի

չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/260 ընթացակարգի շրջանակներում 21.12.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.12.2020թ. թիվ 02/16.4/9185-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի նոյեմբերի 4-ին հայտարարված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Բիդեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն նշված ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ընկերության հայտը մերժվել է:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացվում է ընկերության տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի համաձայն՝ ներկայացնում է Ընկերության կողմից գնման

գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումը հիմնավորող փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/260 ընթացակարգի շրջանակներում 21.12.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/260 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/260 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բիդեք» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2020թ. նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում Հավելված 1.1-ի մասով՝

- 1, 7-9, 14, 16-20, 26, 30-39 տողերում ներկայացված չեն մոդելներ: Անհրաժեշտ է ներկայացնել մոդելներ /առկայության դեպքում/ և այդ մոդելներին համապատասխան հրավերի պահանջներին բավարարող տեխնիկական բնութագրեր:
- 2, 3, 11, 12, 13, 21, 22, 25, 43-47 տողերում ներկայացված չեն տեխնիկական բնութագրեր: Անհրաժեշտ է ներկայացնել այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք կհամապատասխանեն մասնակցի կողմից ներկայացված մոդելին և կբավարարեն հրավերի պահանջներին, կամ՝ ներկայացնել հրավերի պահանջներին բավարարող այլ մոդելներ՝ այդ մոդելներին համապատասխանող տեխնիկական բնութագրեր:
- 11-13, 15, 28, 29, 43 տողերում ներկայացված սարքավորման մոդելը և արտադրողը միմյանց չեն համապատասխանում:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել

կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 04.12.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի (հետայսու նաև Համակարգ) միջոցով ծանուցել է Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.12.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ չի ներկայացվել ոչ մի փաստաթուղթ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18727-2020 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 10.12.2020թ. թիվ 02/16.4/9185-2020 գրությունը և կից փաստաթղթերը, «Բիդեք» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից նյութերով, սույն գործի շրջանակներում առկա մասնագիտական եզրակացությունը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե ***<u>հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ</u>*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ***<u>, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար:</u>*** Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպվել է ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Բիդեք» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.12.2020թ. նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում Հավելված 1.1-ի մասով՝

- 1, 7-9, 14, 16-20, 26, 30-39 տողերում ներկայացված չեն մոդելներ: Անհրաժեշտ է ներկայացնել մոդելներ /առկայության դեպքում/ և այդ մոդելներին համապատասխան հրավերի պահանջներին բավարարող տեխնիկական բնութագրեր:
- 2, 3, 11, 12, 13, 21, 22, 25, 43-47 տողերում ներկայացված չեն տեխնիկական բնութագրեր: Անհրաժեշտ է ներկայացնել այնպիսի տեխնիկական բնութագրեր, որոնք կհամապատասխանեն մասնակցի կողմից ներկայացված մոդելին և կբավարարեն հրավերի պահանջներին, կամ ներկայացնել հրավերի պահանջներին բավարարող այլ մոդելներ՝ այդ մոդելներին համապատասխանող տեխնիկական բնութագրեր:
- 11-13, 15, 28, 29, 43 տողերում ներկայացված սարքավորման մոդելը և արտադրողը միմյանց չեն համապատասխանում:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշում է կայացրել կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 04.12.2020թ. Համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.12.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ չի ներկայացվել ոչ մի փաստաթուղթ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը սույն Ընթացակարգի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ «Բիդեք» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալու հաջորդ օրը՝ 05.12.2020թ., իր էլ. փոստի հասցեից ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնումների համակարգողի tender4@minurban.am էլ. փոստի հասցեին է ներկայացրել շտկված փաստաթուղթը /Հավելված-1.1-ը/՝ ի հավաստումն որի՝ ներկայացնելով Ընկերության էլեկտրոնային փոստից նշված նամակի ուղարկման փաստը հավաստող արտատպումը՝ միաժամանակ ներկայացնելով համապատասխան

որակավորված մասնագետի մասնագիտական եզրակացությունը, որտեղ մասնավորապես նշվում է. «Սույն եզրակացությամբ, ես, Արման Ավետիսյանս, տալիս եմ մասնագիտական եզրակացություն հետևյալի մասին.

«25.12.2020թ. իմ կողմից ուսումնասիրվել է Bedeck LLC օգտատերին պատկանող bedeck.llc@mail.ru էլեկտրոնային փոստը:

Պարզվել է, որ 05.12.2020թ. ժամը 15:45-ին bedeck.llc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է «Հավելված 1.1 շտկում» անվանումը կրող PDF ֆայլը, ինչը հաստատվում է Հավելված 1.1 կցված փոստի արտապատկերներում:

Եզրակացություն՝

05.12.2020թ. ժամը 15:45-ին bedeck.llc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից tender4@minurban.am էլեկտրոնային փոստին հասցեին հաջությամբ ուղարկվել է Հավելված 1.1 շտկում PDF ֆայլը: Վերոհիշյալ նամակի ուղարկման փաստը համապատասխանում է իրականությանը:

Սույն նամակին կցում եմ տվյալ ուսումնասիրության համար հիմք հանդիսացած նյութերը, անձնագրի պատճեն և համապատասխան մասնագիտական որակավորումը հիմնավորող ապացույցը»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Բիդեք» ՍՊԸ-ի դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, Պատվիրատուի կողմից ներկայացված համապատասխան հիմքերը, ինչպես նաև գործով առկա մասնագիտական եզրակացությունը՝ գտնում եմ, որ սույն գործով ձեռք բերված փաստական հանգամանքները մեկնաբանվում են ի օգուտ Ընկերության, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ARMEPS էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 04.12.2020թ. «Բիդեք» ՍՊԸ-ին ուղարկվել է նամակ, որին ի պատասխան՝ Ընկերությունը 05.12.2020թ. ժամը 15:45-ին bedeck.llc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից tender4@minurban.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է «Հավելված 1.1 շտկում» անվանումը կրող PDF ֆայլը, այսինքն՝ Ընկերությունը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկված փաստաթուղթը:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.12.2020թ. թիվ 26/26-1/18727-2020 գրությամբ «Բիդեք» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**